Հավելված N 2
ՀՀ կառավարության 2009 թվականի
ապրիլի 30-ի N 459-Ն որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐՈՒԺԻ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

	Միջոցառումը	Կատարողը	Ժամկետը	Նպատակը (արդյունքը)
	2	3	4	5
1.	Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների հայ գիտնականների գիտական տեղեկատվական միասնական, համալրվող էլեկտրոնային բազայի ստեղծում	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	2009թ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների հայ գիտնականների ներուժի ամփոփ նկարագրի ձևավորում, համահայկական տեղեկատվական դաշտի ձևավորմանն աջակցություն
2.	Առկա տեղեկատվության վերլուծություն՝ ըստ գիտական ուղղությունների և մասնագիտությունների	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	2010թ. 1-ին կիսամյակ	Տվյալների բազայի և վերլուծության արդյունքների առկայություն ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի կայքում
3.	Տվյալների բազայի և տեղեկատվության վերլուծության տրամադրում շահագրգիռ պետական մարմիններին և գիտական կազմակերպություններին	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե	2010թ. 1-ին կիսամյակ	Գիտական կազմակերպությունների կողմից տվյալների բազայի և վերլուծության արդյունքների օգտագործում
4.	Գիտաժողովների, սեմինարների և գիտական համատեղ այլ քննարկումների կազմակերպում	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ էկոնոմիկայի	2009-2012թթ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների հայ գիտնականների համագործակցության ընդլայնում

		նախարարություն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա		
5.	Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների հայ գիտնականների փոխանակման ծրագրերի իրականացում	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	2009-2012թթ. ընթացքում	Հայաստանի Հանրապետության գիտնականների կապերի ընդլայնման միջոցով հետազոտությունների մակարդակի բարձրացում
6.	Հայագիտական հետազոտական աշխատանքներում օտարերկրյա պետությունների հայագիտական կենտրոնների ներգրավում	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	2009-2012թթ. ընթացքում	Հայագիտական հետազոտությունների իրականացման արդյունավետության բարձրացում
7.	Օտարերկրյա պետությունների հայ գիտնականների հետ համաֆինանսավորման սկզբունքով գիտական ծրագրերի իրականացում	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	2009-2012թթ. ընթացքում	Օտարերկրյա պետությունների հայ գիտնականների միջոցով գիտական հետազոտությունների իրականացման արդյունավետության բարձրացում
8.	Միջազգային գիտակրթական կոնսորցիումներին և միություններին գիտակրթական կազմակերպությունների և մասնագետների մասնակցությանն աջակցում	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ գիտությունների	2009-2012թթ. ընթացքում	Գիտական կապերի ընդլայնում, Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հետազոտությունների արդյունավետության բարձրացում

		ազգային ակադեմիա		
9.	Գիտական ծրագրերի փորձաքննության անկախ փորձագիտական համակարգում օտարերկրյա պետությունների հայ գիտնականների ներգրավում	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	2009-2012թթ. ընթացքում	Անկախ փորձագիտական համակարգի աշխատանքների արդյունավետության բարձրացում
10.	Օտարերկրյա պետությունների հայ գիտնականների աջակցությամբ և մասնակցությամբ գիտության ոլորտում ժամանակակից մենեջերների պատրաստում	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	2009-2012թթ. ընթացքում	Գիտական կազմակերպություններում և ծրագրերում ժամանակակից մենեջմենթի ներդրում
11.	Ինովացիոն նախագծերի մշակման և իրականացման, տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ներմուծման և ներդրման գործընթացներում օտարերկրյա պետությունների հայ գիտնականների փորձի օգտագործում	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	2009-2012թթ. ընթացքում	Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն ծրագրերի իրականացում, տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ներդրման գործընթացի ինտենսիվացում